Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի «Ֆիզիկա» /6 դասաժամ/, «Մաթեմատիկա» /17 դասաժամ/, «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» /11 դասաժամ/, «Հասարակագիտություն» /10 դասաժամ/, «Հայաստանի պատմություն» /10 դասաժամ/, «Հայոց լեզու և գրականություն» /8 դասաժամ /ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,

- անձը հաստատող փաստաթուղթ,

- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/

- ինքնակենսագրություն (Ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի սեպտեմբերի 4-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի սեպտեմբերի 22 -ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանքի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 47-17-20 հեռախոսահամարով: